

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ¹

Արագածոտնի մարզը կազմավորվել է 1996 թվին՝ ներառելով Աշտարակի, Ապարանի, Թալինի, Արագածի նախկին շրջանները: Այն փոխված է Արագածի լանջերին և իր մեջ ընդգրկում է նաև Փամբակի ու Ծաղկունյաց լեռնաշղթաների միջև ընկած տարածքը:

Մարզի 72 համայնքում բնակվում են ոչ միայն դարերով այստեղ ապրած հայերի սերունդներ, այլև 1828-30-ական թվականներին Արևմտյան Հայաստանի Ալաշկերտից, Մուշից, Վանից, ինչպես նաև Հին Բայազետից, Խոյից և այլ վայրերից վերաբնակեցվածների սերունդներ: Հետագայում այստեղ են հաստատվել նաև 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից փրկված սասունցիներ, մշեցիներ:

Մարզի բարբառային համապատկերում առանձնանում է Արարատյան բարբառը, որն այս տարածքի մի շարք բնակավայրերի խոսվածքն է եղել դարեր շարունակ:

Արարատյան բարբառը հայոց լեզվի հնագույն դրսևորումներից մեկն է: Ինչպես նշում է Ա.Ղարիբյանը, «Արարատյան կամ Երևանի բարբառի հետքերը գտնում ենք հին գրականության, հին աղբյուրների մեջ սկսած 5-րդ դարից: Առաջինը դրանցից Ղազար Փարպեցին է»²: Ավելի ուշ Արարատյան բարբառի հետքեր են նկատվում նաև Վարդան Բարձրաբերդցու և Զաքարիա Ազուլեցու գործերում: Ընդգծված ու ցայտուն օրինակ է համարվում վերջինիս «Օրագրությունը»՝ գրված 1648-1683 թթ. («Իքումն նստած՝ մին Բ մարդ եկին մին դաջար աղայ ձեռն յետնն կապած, թե՛ մին իքում գոռով մին կնիկ կոխել այ, զաֆտել: Խանն մին սահաթի միջում դիվան արաւ. նույն տեղն գլուխն տվեց»³):

Դարերի ընթացքում Այրարատ նահանգի բնակչությունը բազմիցս ենթարկվել է թշնամիների հարձակումների ու կոտորածների: Կենտրոնական Հայաստանի և մի շարք այլ գավառների համար ողբերգական են եղել հատկապես 1604 թ. Շահ-Աբասի հարձակումը Հայաստանի վրա, հազարավոր հայերի բռնի տեղահանությունը և գաղթեցումը Իրան: Այս

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ 18T-6B302 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

² Ա.Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 218-219:

³ Զաքարիա Ազուլեցի, *Օրագրություն*, Ե., 1983, էջ 142:

բռնագաղթվածների գերակշիռ մասը Արարատյան դաշտի բնակիչներ էին և խոսում էին Արարատյան բարբառով:

Չնայած վերոհիշյալ իրողություններին՝ Արարատյան բարբառը այսօր էլ ամենից լայն տարածում գտած բարբառներից է, որով խոսում են նաև պատմական Հայաստանի Այրարատ նահանգի Արագածոտն գավառում, հատկապես նախկին Աշտարակի, Էջմիածնի, Հոկտեմբերյանի, Նաիրիի շրջաններում: Ինչպես իրավացիորեն նշում է Ա.Ղարիբյանը, բազմաթիվ գաղթեր պատճառ են հանդիսացել, որ Արարատյան բարբառով խոսողների կողքին այժմ հայտնվել են այլ բարբառակիրներ, օրինակ, Էջմիածնի շրջանի 27 գյուղից 14-ում խոսում են Արարատյան բարբառով, 8-ում՝ Ուրմիայի բարբառով, 3-ում՝ Մշո բարբառով, 2-ում էլ՝ խառը բարբառով⁴:

Նույնպիսի իրողություն է արձանագրված Վայոց ձորի մարզում. Արարատյան բարբառով են խոսում նաև այս մարզի հին բնակիչները, որոնք «հին հայեր» անվանումն են ստացել (Արենի, Խաչիկ, Գնիշիկ, Աղավնաձոր, Ռինդ, Չիվա, Արփի և այլ գյուղեր): Այստեղ բնակվում են նաև Իրանից՝ Խոյի գավառից, 1829-1830-ական թթ. գաղթած հայեր:

Արարատյան բարբառի ամենարնդգրկուն տարածքը Լոռին է՝ պատմական Տաշիրք գավառը (նախկին Թումանյան, Նոյեմբերյան, Ստեփանավան, Գուգարք շրջաններով): Պետք է նկատել, սակայն, որ լոռեցիների խոսվածքում առկա են նաև որոշ տարրեր Ղարաբաղի և Թբիլիսիի բարբառներից:

Սումալուի և Կաղզվանի բնակիչների մայրենին ևս եղել է Արարատյան բարբառը: 1920 թ. Թուրքիան զավթեց հիշյալ գավառակները, ժողովրդի մի մասը կոտորվեց, մի մասն էլ տարհանվեց և գաղթեց Արևելյան Հայաստանի տարրեր շրջաններ:

Արարատյան բարբառի խոսվածքներ են համարվում նաև Առինջի, Ջրվեժի, Քանաքեռի, Նորքի խոսվածքները:

Հ.Աճառյանի դիտարկմամբ՝ «Երևանի բարբառը շատ մաքուր և գրական լեզուին խիստ մոտիկ բարբառ մէ և եթե ի նկատի ունենանք միայն Ում ճիւղին բարբառները, ամենէն մաքուրն է: Եվ ահա այս իր մաքրութեան և իր ընդարձակ ծաւալին համար է, որ ծառայած է իբրև հիմն՝ Ռուսահայ գրական լեզուին կազմութեան համար»⁵:

Ա.Ղարիբյանը, խոսելով Արարատյան բարբառի մասին, կարծում է, որ Արարատյան բարբառով մաքուր խոսվածք կարելի է գտնել Փարպի գյուղում և

⁴ Ա.Ղարիբյան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 219:

⁵ Հ.Աճառյան, *Հայ բարբառագիտություն, Էմինեան ազգագրական ժողովածու*, հ. Ը, Մոսկուա-Նոր Նախիջեան, 1911, էջ 38:

Հոկտեմբերյանի (այժմ՝ Արմավիր) շրջանի գյուղերում, որովհետև Երևանի խոսվածքը գրական լեզվի ազդեցությամբ խիստ փոփոխության է ենթարկվել⁶:

Գ.Զահուկյանը, ըստ բարբառների բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման, բարբառների արևելյան խմբակցության մեջ առանձնացնում է Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախումբը՝ նրա մեջ ընդգրկելով Երևանի կամ Արարատյան բարբառը՝ հիշատակելով Աշտարակի, Երևանի, Քանաքեռի, Էջմիածնի, Կողբի, Աստապատի, Ղալաչայի և Գյառգյառի խոսվածքները⁷:

Արարատյան բարբառի հանգամանակից քննություն է կատարել Ռ. Մարկոսյանը: «Արարատյան բարբառ» աշխատասիրության մեջ (հրատարակվել է 1989 թ.) նա շնորհակալ գործ է կատարել՝ մանրամասն ներկայացնելով բարբառի տեղագրությունն ու վիճակագրությունը, քննելով բարբառի հնչյունական, ձևաբանական, շարահյուսական համակարգերը: Աշխատության մեջ ներառված են նաև նմուշներ Արարատյան բարբառի խոսվածքներից, ընդգրկված է նաև բառացանկ⁸:

Սույն հոդվածում կանոնադաշտնաբք Արագածոտնի մարզի Արարատյան բարբառի՝ Աշտարակ քաղաքի, Փարպի, Մուղնի, Օշական գյուղերի խոսվածքներին՝ կատարելով բարբառային որոշ իրողությունների քննություն:

1. Ինչպես նկատել են ուսումնասիրողները, Արարատյան բարբառի մի շարք խոսվածքներում՝ Լոռու, Աշտարակի, Էջմիածնի, Վայոց ձորի, Սպիտակի, Քանաքեռի, Նորքի, Առինջի, Ջրվեժի, նաև Աստապատի ենթաբարբառում, շեշտը վերջընթեր է:

Ահա մի քանի նմուշ Աշտարակի, Օշականի, Փարպիի խոսվածքներից. հալի'վօր, հ'առդա'սունք, շըլա'գել, փըթա'թել, սա'տկել, բ'անցրա'նալ, նի'լնել (բարձրանալ):

Փաստենք, որ խնդրո առարկա խոսվածքների վերջընթեր շեշտը, ի տարբերություն Լոռու խոսվածքի վերջընթեր շեշտի, այնքան էլ ուժեղ չէ: Ի դեպ, Լոռու խոսվածքի շեշտի ուժեղ լինելով է պայմանավորված շեշտից առաջ եղած ձայնավորի հնչյունափոխվելը ը-ի, ինչին անդրադառնում է Մ.Ասատրյանը «Լոռու խոսվածքը» մենագրության մեջ⁹: Նշենք, որ Լոռու խոսվածքի շեշտը այս առումով նման է Ղարաբաղի բարբառի շեշտին:

⁶ Ա.Ղարիբջան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 220:

⁷ Գ.Զահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1972, էջ 135:

⁸ Ռ.Մարկոսյան, *Արարատյան բարբառ*, Ե., 1989:

⁹ Մ.Ասատրյան, *Լոռու խոսվածքը*, Ե., 1968, էջ 13:

2. Ե, ո հնչյունների երկբարբառային արտասանությունը հիշյալ խոսվածքների այսօրվա բարբառախոսների խոսքում գրեթե վերացել է. մեծահասակների խոսքում երբեմն հատուկենտ օրինակներում է պահպանվել այս երևույթը: Մուղնիում գրանցել ենք հետևյալ օրինակները. «գ'եղըմը չկա», «ձ'ըվաձեղ», Աշտարակում՝ «Յէս մէնձ էմ», «ձոր», Փարպիում՝ «յեզներ» և այլն:

3. Արարատյան բարբառի խոսվածքների գերակշռող մասում, մասնավորապես Աշտարակի, Փարպիի, Օշականի, Մուղնիի խոսվածքներում, բաղաձայնական համակարգը քառաստիճան է՝ ֆ', ք, պ, փ, գ', գ, կ, ք և այլն: Այդպիսի օրինակներ ենք գրանցել Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից իրականացվող գիտարշավների ընթացքում. ֆ'երան, գ'եղ, գ'արունք, դ'արդագ, դ'ըմագ, ձ'ըվաձեղ, ձ'ինը (ձյունը), ջ'ուր, ձ'իանիք (ձիեր), գ'իլանոց (գայլի բաժին), ջ'ընջըխիլ, ջ'ոգ և այլն: Հակառակ սրան՝ Քանաքեռի, Առինջի, Ջրվեժի, Պտղնիի, Սպիտակի շրջանի մի քանի և Վայոց ձորի 11 խոսվածքներում ձայնեղները բառասկզբում դառնում են խուլեր. օրինակ՝ ֆերան > պերան, գինի > կինի, դուռ > տուռ և այլն:

Արագածոտնի մարզի Արարատյան բարբառի այս խոսվածքներում հետնալեզվային *գ, կ, ք* հնչյունները *է, ի* ձայնավորներից առաջ բառասկզբում և բառամիջում երբեմն քմայնանում են՝ վերածվելով *գ', կ', ք'* հնչյունների: Եվ, ինչպես փաստում է Ռ.Մարկոսյանը, այս հնչյունների քմայնացումն այնքան է սաստկացել, որ Աշտարակի և Օշականի խոսվածքներում դրանք վերածվել են ջ', ձ, չ հնչյունների, ինչպես՝ գայլ>ջ'ել, գ'եղ>ջ'եղ, հոգի>ֆոջի, քույր>չիր, գինի>ջինի, քիչ>չիչ, կեր>ձեր¹⁰:

Արձանագրենք, որ ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում պահպանված ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում, որոնք գրանցվել են 1980-ական թթ., Աշտարակի և Օշականի խոսվածքներում առկա է այս երևույթը: Ինչպես՝ Գուլպա > ջ'ուլպա, գինի > ջ'ինի, կերցրու > ձերցրա, գերան > ջ'երան, կյանք > գյանք > ջ'անք, գետին > ջ'եղին, քերել > չերիլ, քիր > չիր, կեր > ձեր, գերանդի > ջ'երանդու, «Գ'ընաց *հիչին* ֆ'անելու» (Գնաց այգին աշխատելու)¹¹ և այլն:

Մեր գիտարշավների ընթացքում այս երևույթը այսօր գրեթե դրսևորված չէ: Հիշյալ խոսվածքների բարբառախոսները երբեմն նկատում էին, որ տարեցներն իրենց խոսքում օգտագործել են ջ'երի եմ (գերի եմ), ջ'ելեր, ջ'իլանիք (գայլեր), ջ'ինի (գինի), ջ'ինանիք (գինիներ), ջ'եղ (գեղ), ֆոջի (հոգի), ջ'եժ անդեր(գիժ անտեր) և այլն:

¹⁰ Ռ.Մարկոսյան, *Արարատյան բարբառ*, Ե., 1989, էջ 68:

¹¹ Տե՛ս տետր հ. 151, Աշտարակի խոսվածքը:

4. Արագածոտնի մարզի վերոհիշյալ խոսվածքների կարևոր առանձնահատկություններից է նաև *n* ձայնավորից առաջ *h*-ի վերածումը *ֆ*-ի: Օրինակ՝ *հորթ* > *ֆորթ*, *հոգի* > *ֆօջի*, *ֆօքի*, *հող* > *ֆօղ*, *հոտ* > *ֆօտ*, *հոտել* > *ֆօտիլ*, *հոր* > *ֆօր*: Արարատյան բարբառին բնորոշ բարբառային այս հատկանիշը կենսունակ է նաև այսօր: Վերոհիշյալ ծրագրի շրջանակներում կազմակերպած մեր գիտարշավների ժամանակ կատարած գրացումներում արձանագրել ենք հետևյալ օրինակները՝ *ֆօղ*, *ֆօրթ*, *ֆօրել*, *էրկուֆօքի (հղի)*, *իքնաֆօղէք (այգողք)*, *ֆօջի* և այլն:

5. Արարատյան բարբառի որոշ խոսվածքներին բնորոշ առանձնահատկություններից է բառակազմում *խ* հնչյունի դիմաց տարնմանական *h*-ի առկայությունը: Ե՛վ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերում, և՛ ներկայիս բարբառախոսների վկայությամբ Աշտարակի, Օշականի, Փարպիի, մասամբ նաև Մուղնիի խոսվածքներում այս երևույթը դրսևորված է, թեև ունի նաև նահանջի միտումներ: Գրանցել ենք հետևյալ օրինակները՝ *հաղացքրի*, *հավօղ*, *հաղ ա անըմ*, *հէխտէլ*, *հէխտա՛*, *հէղխտըվէց*, *խէղջ//հէղջ* և այլն:

6. *Իւ* և *ոյ* երկբարբառները խնդրո առարկա խոսվածքներում բառամիջում դարձել են *ի* կամ *ու*: Օրինակ՝ *ալիւր* > *ալիր*, *արիւն* > *արին*, *հարյուր* > *հարիր*, *աղբիւր* > *հ՛ախպուր*, *քոյր* > *քիր*, *ձիւն* > *ձ՛ին*, *սիւն* > *սին*, *սառոյց* > *սառից*, *ձիւթ* > *ձ՛ութ*, *մորաքոյր* > *մօքիր* և այլն: Հարկ է նշել, սակայն, որ *իւ* և *ոյ* երկբարբառների *ի*-ի վերածման հատկանիշը ևս աստիճանաբար տեղի է տալիս *ու*-ով տարբերակին, որը գրական հայերենին ավելի մոտ է, ինչպես՝ *քուր*, *ձ՛ուն*, *արուն* և այլն:

7. Արագածոտնի մարզի հիշյալ խոսվածքների ուշագրավ յուրահատկություն է այն, որ *ը* հոդը կիրառվում է բոլոր հոլովածներում՝ բացառությամբ սեռական հոլովի: Ահա մի քանի օրինակ մեր գրանցումներից՝ *գ՛եղըմը* (գյուղում), *հ՛իքըմը* (այգումը), *ֆօղըմը* (հողումը, *փօրնէրըմը* (փորերումը), *լուկըմը* (օրորոցումը), *քըվօրիցը*, *տանիցը*, *հօրօվը*, *հօրիցը*, *կարմընջիցը*, *արէվիցը*, «Հալիվօրները նըստած ին պաղի *շըվաքըմը*» և այլն:

Ինչպես երևում է օրինակներից, ներգոյական հոլովում *ում* հոլովակերտը դրսևորված է *ըմ* հնչատարբերակով: Ի դեպ, հիշյալ խոսվածքներում անկատար ներկայի *ում* վերջավորությունը ևս արտահայտվում է *ըմ* հնչածևով. «Էրէխէքը ճան էն *հաղըմ*»: Սա մեկ անգամ ևս հիմնավորում է Ա.Աբրահամյանի և այլ լեզվաբանների դրույթն այն մասին, որ *ում*-ով վերջավորվող անկատար դերբայը ծագումով նույնանում է

ներգոյական հոլովի *ու* վերջավորութեան հետ¹²: Եվ, ինչպէս վկայում է Ա.Ղարիբջանը, «դրա ամենահիմնական և անհերքելի ապացոյցն այն է, որ «ու» վերջավորութեամբ դերբայ ունեցող բոլոր բարբառները միաժամանակ ունեն նաև ներգոյական հոլով: Դրան հակառակ՝ շատ բարբառներ, որոնք ներգոյական հոլով չունեն, չգիտեն նաև «ու» վերջավորութիւնն ունեցող անկատար դերբայը»¹³:

Ինչպէս Աշտարակի, Օշականի, Փարպի խոսվածքների օրինակներն են փաստում, անկատար դերբայի և ներգոյականի ձևերը հնչյունական փոփոխություններով ևս համընկնում են: Եթէ մի խոսվածքում անկատարը դրսևորված է *ը* տարբերակով, ապա նույն *ը* ձևն ունի նաև ներգոյական հոլովը:

8. Աշտարակ քաղաքի, Օշականի, Փարպի գյուղերի խոսվածքներում *տ* հնչյունը *ն*-ից առաջ առնմանությամբ վերածվել է *ն*-ի, ինչպէս՝ *մատնոց > մաննոց, ոտքեր > վոններ, մատներ > մաններ, մտանել > մրննիլ* (Վօտի *մանները* կուցում էլ ա)¹⁴: Հարկ է փաստել, սակայն, որ հնչյունափոխական այս երևույթը ևս հիշյալ խոսվածքներում աստիճանաբար մարում է:

9. Արագածոտնի մարզի Արարատյան խոսվածքների հրամայական եղանակի կազմությունը ևս ուշագրավ է: Ե խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակը հիմնականում ձևավորվում է *ա*, սակավ դեպքերում էլ՝ *ի* վերջավորությամբ՝ այսինքն՝ *իր* հրամայականի *ը*-ի անկումով: Մեր գիտարշավների հարցախույզների ժամանակ արձանագրել ենք հետևյալ օրինակները՝ *գրրա՛, խրմա՛, բ՛րոնա՛, կըղրա՛, պահա՛, փագա՛, քամա՛, փոխա՛, ծա՛մա, վագի՛, նըստի՛* և այլն:

Արարատյան բարբառն առանձնանում է նաև արգելական հրամայականի յուրահատուկ կազմությամբ: Ըստ 1980-ական թթ. բարբառագիտության բաժնի կողմից ՀԲԱ ծրագրով գրանցված նյութերի՝ Աշտարակի, Օշականի խոսվածքներում *մի* արգելական հրամայականը կիրառվել է հիմնականում հետադաս, երբեմն էլ՝ նախադաս: Օրինակ՝ *մրնա՛լ մի, գ՛րրի՛լ մի, քաշի՛լ մի (մի՛ ծխի), տանի՛լ մի, տա՛լ մի, գ՛ալ մի, ինչպէս նաև՝ մի՛ հադա, մի՛ մրնա, մի՛ տա, մի՛ գա* և այլն:

Արձանագրենք, սակայն, որ այսօր արգելական հրամայականի անորոշ դերբայի և *մի* մասնիկի հետադաս կիրառությամբ կազմությունը գործածական չէ բարբառախոսների կողմից: Այստեղ հոգնակիության

¹² Ա.Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., 1953, էջ 74-121, 292-305:

¹³ Ա.Ղարիբջան, *Հայ բարբառագիտություն*, Ե., 1953, էջ 164:

¹⁴ Տե՛ս տեքստեր հ. 320, 151, 9:

իմաստը դրսևորվում է *մի* մասնիկի հոգնակիությամբ: Այն Աշտարակի, Օշականի, Փարպիի խոսվածքներում *մէք* տարբերակով է դրսևորված և հանդես է գալիս թե՛ նախադաս, թե՛ հետադաս: Ի դեպ, դերբայից առաջ դրվելու դեպքում բայի լ վերջավորությունը ընկնում է, իսկ նախադաս դիրքում լ-ն պահպանվում է: Այսպես՝ *հաղա՛լ մէք, մընա՛լ մէք, ք՛րոնի՛լ մէք, էթա՛լ մէք, մէ՛ք մընա, մէ՛ք էթա, մէ՛ք քաշի* և այլն: Հարկ է նշել, որ Օշականի խոսվածքում փաստված է նաև արգելական հրամայականի *ոչ* մասնիկով կազմություն¹⁵, ինչպես՝ *հաղա՛լ մէք/հաղա՛ք վօջ, մընա՛լ մէք// մընա՛ք վօջ* և այլն:

Այս հատկանիշները ևս տասնամյակների ընթացքում փոփոխության են ենթարկվել, և այսօր հիշյալ խոսվածքներում գործածական են միայն *մի* մասնիկի հոգնակիությամբ ձևերը՝ *մէ՛ք մընա, մէ՛ք հաղա*, ինչպես նաև գրական լեզվի ազդեցությամբ բայաձևերը՝ *մի՛ գ՛րըէք, մի՛ մընացէք*:

10. Արարատյան բարբառի շատ խոսվածքների նման ներկա ժամանակի օժանդակ բայը երրորդ դեմքում *է*-ի փոխարեն արտահայտված է *ա*-ով: Օրինակ՝ «Ֆողը կազդել *ա*», «Ավօյի կընիգը երգութօքիս *ա*» և այլն:

11. Արագածոտնի մարզի հիշյալ խոսվածքներում յուրահատուկ կազմություն ունեն որոշ ցուցական և հարցական դերանուններ: *Այսքան, այդքան, այնքան* ցուցական և *ինչքա՞ն* հարցական դերանունների դիմաց գործառում են *ըզդար, ըդար, ընդար* դերանունները: Օրինակ՝ «*Ընդա՞ր* կա», «*Ըզդար* գ՛օրձ անել կըլի, վօր անըմ էս», «*Ըդարը* ի՞նչ տի անէս», «*Ըզդար* պօպօքը ի՞նչ տի անէս»:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք ասել, որ Արագածոտնի մարզի Արարատյան բարբառի խոսվածքները, իրենց հետաքրքիր յուրահատկություններով հանդերձ, որոշ դեպքերում, գրական հայերենի ազդեցությամբ պայմանավորված, կորցնում են մայրենի բարբառին բնորոշ հատկանիշները: Անշուշտ, կան հատկանիշներ, որոնք այսօր էլ կենսունակ են, ինչպես՝ բաղաձայնական համակարգում շնչեղ ձայնեղների գործածությունը, որոշ դեպքերում *հ*-ի դիմաց *ֆ*-ի կիրառումը, *է* խոնարհման պարզ բայերի հրամայական եղանակի *ա* վերջավորությամբ ձևավորվելը, *մի* մասնիկի հոգնակիությամբ արգելական հրամայականի կիրառումը և այլն:

Եվ ինչպես ցույց տվեցին մեր դիտարկումները, կան բարբառային հատկանիշներ, որոնք հիշյալ խոսվածքներում նահանջի միտում են դրսևորել: Օրինակ՝ *է, ո* հնչյունների երկբարբառային արտասանությունը գրեթե վերացել է, արդեն կենսունակ չէ *զ, կ, ք* քմային հնչյունների վերածումը *ջ, ճ*,

¹⁵ Տե՛ս տեևոր հ. 20:

չ-ի: Գրեթե գործածական չէ նաև արգելական հրամայականի անորոշ դերբայի և *ս/հ* մասնիկի հետադաս կիրառությամբ կազմությունը և այլն:

Асмик Хачатрян. Некоторые диалектные реалии Арагацотнской области
В данной статье мы обратились к Араратскому диалекту Арагацотнской области — города Аштарак, говорам сёл Парпи, Мугни, Ошакан, проведя анализ некоторых диалектных реалий. В общих чертах мы представили присущие упомянутым говорам фонетические и грамматические особенности.

Hasmik Khachatryan - Some Dialectal Realities of the Aragatsotn Region.
In this article after analyzing some dialectal realities, we turned to the Ararat dialect of the Aragatsotn Region, namely to the speeches of the city of Ashtarak, and the villages of Parpi, Mughni, and Oshakan. In general, we presented the phonetic and grammatical features that are characteristic of the before-mentioned speeches of this dialect.